

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 131**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհուրդի  
2015թ. Սեպտեմբերի 30-ին կայացած նիստի

- Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
- Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
գիտական քարտուղար Ա.Այվազյանի
- Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական  
խորհուրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է):

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2015-2016 ուսումնական տարվա աշխատանքնային պլանի քննարկում և հաստատում:  
Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Ա.Այվազյան:
2. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփում:  
Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:
3. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առաջին տարվա ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:  
Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:
4. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ Արամ Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցի քննարկում:  
Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:
5. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիան Եվրամիության ՏԵՄՊՈՒՍ Ծրագրի VERITAS “Structural Development of the Third Cycle Based on Salzburg Principles” (Զալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում) ծրագրի շրջանակներում ասպիրանտուրայի օրինակելի կրթական ծրագրի որոշում:  
Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:
1. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2015-2016

ուսումնական տարվա աշխատանքնային պլանի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Ա.Այվազյան:

Որոշեցին՝

Հաստատել՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2015-2016 ուսումնական տարվա աշխատանքնային պլանը:

2. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության արդյունքները:

3. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առաջին տարվա ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Որոշեցին՝

- Իրավագիտության ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Հայկ Սեյրանի Կեսոյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտական ղեկավար՝ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Վահե Վարդանի Ստեփանյանին:
- Կառավարման հոգեբանության ամբիոնի ԺԹ.00.01.– «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ առաջին տարվա ասպիրանտ Դավիթ Ավանեսյանի՝ թեկնածուական ատենախոսության «Անձի դրամային վարքի դրսևորումները պայմանավորող հոգեբանական գործոնները» թեման երաշխավորել և ներկայացնել այն հաստատման: Գիտական ղեկավար առաջադրել կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ռ.Վ. Աղուզումցյանի թեկնածությունը:

4. Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ Արամ Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:

Որոշեցին՝

Իրավագիտության ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ ասպիրանտ Արամ Աշոտի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հայաստանի Հանրապետության ինքիշխանության սահմանադրաիրավական հիմնախնդիրները հանրային կառավարման արդիականացման պայմաններում» փոխել «Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները» վերտառությամբ:

5. Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիան Եվրամիության ՏԵՄՊՈՒՍ Ծրագրի VERITAS “Structural Development of the Third Cycle Based on Salzburg Principles” (Զալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում) ծրագրի շրջանակներում ասպիրանտուրայի օրինակելի կրթական ծրագրի որոշում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեզիրջյան:

Որոշեցին՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիան Եվրամիության ՏԵՄՊՈՒՍ Ծրագրի VERITAS “Structural Development of the Third Cycle Based on Salzburg Principles” (Զալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում) ծրագրի շրջանակներում ասպիրանտուրայի օրինակելի կրթական ծրագիր սահմանել կառավարման հոգեբանության ամբիոնի ԺԹ.00.01.– «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտության կրթական ծրագիրը:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար

Ա.Այվազյան

30 սեպտեմբերի 2015թ.

Կ.Տ.